

## ԱՐՅԱԽԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մկրտչյան Է. Ս., Խծաբերդը և կյանքիս շառավիղը  
(հուշագրություն), Եր, «Ռեալ Պրինտ» հրատ,  
2023, 280 էջ+58 էջ, նկ.:

**Բանալի բառեր** – Խծաբերդ, հուշագրություն, պրոֆեսոր, բնակավայր, ստուգաբանություն, ուսումնասիրություն, տոհմաբանություն, հիշողություն, բնակիչ, բառակազմություն, քերականություն, դպրոց, բնիկ ժողովուրդ, բռնի տեղահանություն, տեղեկատվական պատերազմ:

### Մուտք

Արցախի Հանրապետության բռնազավթումից ու բնիկ հայ բնակչության՝ ցեղասպանության սպառնալիքով տեղահանությունից հետո արդիական-քաղաքական կարևոր նշանակություն ձեռք բերել երբեմնի «Հայոց արևելից կողմանց» բնակավայրերի պատմության վերահիմնաստավորումն ու հանրահռչակումը:

Դա պայմանավորված է պատմական Հայաստանի բռնազավթված տարածքներից հայկական հետքը ջնջելու, յուրացնելու և նենգափոխելու Ադրբեյջանի պետական քաղաքականությամբ վտանգված հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման պահանջը միջազգային կառույցներին հասցնելու, մեր հայրենակիցների պատմական հիշողությունը արթուն պահելու, հայրենի օջախներ վերադառնալու գաղափարի շուրջ համախմբելու, Հայաստանին ու համայն հայությանը պարտադրված կոզնիտիվ պատերազմում մեր հակափաստարկներն ուժեղացնելու անհրաժեշտությամբ:

Այս տեսանկյունից գնահատելով իր հայրենի **Խծաբերդ** գյուղի պատմությունը ներկայացնելու՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Էդուարդ Սամսոնի Մկրտչյանի** նախաձեռնությունը՝ կարող ենք հավաստել, որ այն օրինակ է ծառայել մեր մյուս մտավորականներին՝ Արցախի մյուս բնակավայրերին նվիրված գրքերի հրատարակման համար: Հուսանք, որ հայկական հրատարակչություններից գոնե մեկը սիրով կստանձնի Հայոց արևելից կողմանց բնակավայրերի

---

\* Ընդունվել է տպագրության 15.09.2024:

մասին պատմաաշխարհագրական, ազգագրական, ռազմաքաղաքական, պատմամշակութային և այլ բնույթի աշխատությունների մատենաշարի տպագրության առաքելությունը:

Մեր լավատեսությունը բխում է այն իրողությունից, որ նախկինում հրատարակված նմանօրինակ գրքերը նկատելի պահանջարկ են վայելել արցախցիների շրջանում: Նախանձախնդրություն են ցուցաբերել փոքր հայրենիքի հանդեպ իրենց որդիական պարտքը գիտակցող բազմաթիվ հայրենասեր մարդիկ, որոնց հովանավորությամբ ու ֆինանսական աջակցությամբ լույս է տեսել Արցախի բնակավայրերի մասին պատմող գրքերի զգալի մասը: Այդպիսի հրատարակությունները կարելի է դասակարգել երեք խմբի: **Նախ** առանձնանում են ընդհանապես Հայոց արևելից կողմանց, և մասնավորապես Արցախի բնակավայրերին ու վարչատարածքային միավորներին նվիրված գրքերը<sup>1</sup>: Այս առումով հատկանշելի է Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանի (1832–1906) աշխատությունը<sup>2</sup>, որի հեղինակին կարելի է համարել այդօրինակ հայրենանվեր նախաձեռնությունների նախակարապետը:

1 Տե՛ս **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, Վիեն., տպ. Մխիթարեան, 1953, 256 էջ, **Բարխուդարյան Ս.**, Դիվան հայ վիմագրության, պր. 5-րդ: Արցախ: ՀԱԻ ՀՍՍՀ ԳԱ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 350 էջ, **Սկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Եր., «Հայաստան», 1980, 216 էջ (Եր., «Հայաստան», 1985, 356 էջ), Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, **Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան; ԵՊՀ**, հտ. 1 (1986, 991 էջ), հատ. 2 (1988, 991 էջ), հտ. 3 (1991, 992 էջ), հատ. 4 (1998, 812 էջ), հատ. 5 (2001, 912 էջ), **Микртчян Ш.**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ер., «Айастан», 1989, 360 с, **Մելքունյան Ս.**, Լեռնային Ղարաբաղ, Եր., «Լույս», 1990, 303 էջ, **Հարաթյան Ս.**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Արվեստի ինս-տ ՀԳԱ, Եր., ՀԳԱ հրատ, 1992, 140 էջ, **Մելքունյան Ս.**, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1997, 374 էջ, **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1999, 288 էջ (նաև ռուս. և անգլ.), **Микртчян Ш.**, Сокровища Арцаха: Географические сведения. Историко-культурный очерк, «Тигран Мец», 2000, 271 с., **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, Գ. Զ, Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2004, 584 էջ (նաև ռուս. և անգլ.), **Մելքունյան Ս.**, Արցախ-Ղարաբաղ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., «Յատն» ՍՊԸ, 2010, 415 էջ, **Ղահրամանյան Հ.**, Տեղեկատու ԼԴՀ վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական բնութագրերի, Եր., «Ճարտարագետ», 2015, 396 էջ, **Սարգսյան Ս.**, Արցախի բնակավայրերը (ստուգաբանություններ), Եր., ԱՀ, 2018, 256 էջ, **Սամուկյան Ս.**, Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության շրջանները, քաղաքները, գյուղերը: Պատմամշակութային, ֆիզիկաաշխարհագրական, վարչատնտեսական նկարագրեր, Եր., «Ասողիկ», 2020, 630 էջ, **Բալայան Վ.**, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Եր., «Զանգակ», 2020, 752 էջ:

2 Տե՛ս Արցախ: Երկասիրեց Ս. Եպս. Բարխուդարեանց, Բ., տպ. «Արօր», 1895, 460 էջ (այն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ. **Բարխուդարյան Ս.**, Արցախ [Պատմա-աշխարհագրական վերլուծություն], Եր.-Ստ., «Ամբաս»: «Մունք», 1995. 1996, 300 էջ, չորրորդ հրատ. Եր., «Լուսակն», 2018, 462 էջ, **Բարխուդարեանց Ս.**, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Հատորը կազմեց Պ. Չոբանեան, Եր., «Գանձասար», 1999, էջ 153-415, Арцах /

**Երկրորդ** խումբը կազմում են Մարտունու<sup>3</sup>, Մարտակերտի<sup>4</sup>, Ասկերանի<sup>5</sup>, Շուշիի<sup>6</sup>, Հյուսիսային Արցախի և Շահումյանի<sup>7</sup>, Հադրութի<sup>8</sup> շրջանների առանձին բնակավայրերին նվիրված գրքերը:

Епископ Мака́р Бархуда́рьян; Сост. и подгот. текста Б.А. Григорян, В.Г. Григоряна; Пер. с арм. Н. Алексаняна, СПб, «Наука», 2009, 392 էջ):

- 3 Տե՛ս **Առուստամյան Վ.**, Թաղավարդ, Եր., «Արևիկ», 1995, 98 էջ, **Սիրզյան Վ.**, Սարգսաշեն, Ստ., «Պոլիգրաֆ», 1997, 48 էջ, **Բալայան Վ.**, Գիշի, Եր., «Ոսկան Երևանցի», 1997, 80 էջ, **Բալայան Գ.**, Աշան գյուղը և աշանցիները, Ստ., «Սոնա», 1999, 48 էջ, **Սկրտչյան Ա.**, Մաճկալաշենի փառալուիներով, Ստ., «Ազատ Արցախ», 2002, 48 էջ, **Մելքունյան Ս.**, Ճարտար, Եր., Ջանգալ-97, 2003, 156 էջ, 2-րդ հրատ., 2006, 177 էջ, **Բեգլարյան Մ.**, Ղարաբաղի մեր Քարահունջը, Ստ., «Պոլիգրաֆ», 2004, 208 էջ, **Առաքելյան Մ.**, Ասք Ղարաբաղի և Ննգի գյուղի մասին. ազգագրական պատմություն, 3 հատ., Եր., 2005, 578 էջ, **Բալայան Գ.**, Աշան. գյուղի ու մարդկանց մասին, Ստ., «Դիզակ պլյուս», 2006, 80 էջ, **Ավետիսյան Ն.**, Հադրուտի, Ստ., Ա. հատ., 2009, 229 էջ, **Արբահամյան Հ.**, Քերթ, Եր., Ջանգալ-97, 2010, 176 էջ, **Քոչարյան Վ.**, Սարգսաշեն, Ստ., «Դիզակ պլյուս», 2015, 196 էջ, **Հովսեփյան Վ.**, Հայրենական. վերավոր Թաղավարդ, Եր., «Արմավ», 2022, 308 էջ և այլն:
- 4 Տե՛ս **Հակոբյան Փ.**, Դրմբոն գյուղի պատմությունը, Ստ., «Պոլիգրաֆ», 1999, 216 էջ, **Բայունց Ս.**, Թալիշ. Գոյության պայքար, Եր., «Նոյան տապան», 2001, 160 էջ, **Սարգսյան Ս.**, Թալիշ, Եր., «Ամարաս», 2007, 176 էջ, **Գրիգորյան Գ.**, Մոխրաթաղ, 2-րդ հրատ., Ստ., «Դիզակ պլյուս», 2009, 144 էջ, **Վանյան Գ.**, Կոճողոտ գյուղի պատմությունը, Ստ., «Դիզակ պլյուս», 2009, 360 էջ, **Վանյան Գ.**, История села Кочогот, Ст., «Дизак Плюс», 2009, 208 էջ, **Ավագիմյան Վ.**, Ղազանչի. դրախտի և դժոխքի միջով, Ստ., «Դիզակ պլյուս», 2011, 96 էջ, **Աղաջանյան Մ.**, Հաթերք. պատմությունը՝ հնադարից մինչև մեր օրերը, Ստ., «Դիզակ պլյուս», 2012, 688 էջ, **Աղայան Ա.**, Քոլատակ. Համառոտ պատմություններ գյուղի և նրա մարդկանց մասին, Ստ., «Դիզակ պլյուս», 2014, 60 էջ, **Հարությունյան Շ.**, Առաջածոր, Եր., «Լուսակն», 2014, 464 էջ, **Աղաջանյան Մ.**, Բնօրրան Հաթերք, Ստ., «Դիզակ պլյուս», 2016, 159 էջ, **Գրիգորյան Վ.**, Արցախի Ղազանչի: Գյուղի պատմությունը, Ստ., «Դիզակ պլյուս», 2020, 253 էջ, **Մնացականյան Վ.**, Պատմական Առաջածոր ու նորից պատերազմ, Եր., «Լուսաբաց» հրատ., 2021, 486 էջ և այլն:
- 5 Տե՛ս **Գալստյան Ա.**, Հաղթանակ, Ստ., «Սոնա», 2000, 252 էջ (1-ին հրատ), 2007, 284 էջ (2-րդ հրատ), 2017, 399 էջ (3-րդ հրատ), **Աղասարյան Գ.**, Խնձրիստան գյուղի պատմությունը, Ստ., «Պոլիգրաֆ», 2002, 176 էջ, **Սամվելյան Է.**, Կարոտի կանչ, Եր., «Նաիրի», 2004, 240 էջ, **Արբահամյան Ժ.**, Դահրավ. Հայրենի հիշատակներ, Ասկ., «Օլիմպ», 2005, 60 էջ, **Թաղևոսյան Հ.**, Հին ու նոր Ավետարանոց, Ստ., «Պոլիգրաֆ», 2006, 142 էջ, **Սարգսյան Ս.**, Խնապատ, Եր., Ջանգալ-97, 2006, 304 էջ, **Մարտիրոսյան Զ.**, Նորագյուղի դպրոցը (1923-2008). 85-ամյակ, Ստ., «Դիզակ պլյուս», 2007, 144 էջ, **Սամվելյան Է.**, Երկեր, Եր., «Նաիրի», 2007, 427 էջ, **Գրիգորյան Ժ.**, Ուլուբաք, Ստ., «Սոնա», 2011, 116 էջ և այլն:
- 6 Տե՛ս **Սկյան Վ.**, Շուշի, Եր., «Հայաստան», 1991, 128 էջ, **Տեր-Գասպարյան Ռ.**, Շուշի քաղաքը, Եր., Հայաստանի ԳԱ հրատ., 1993, 125 էջ, **Մկրտչյան Ս.**, Давтян Ш., Шуши. город трагической судьбы, Ер., «Амарас», 1997, 160 էջ, **Վարապետյան Բ.**, Շուշի բերդաքաղաքը, Եր., ԵՀ հրատ., 2000, 350 էջ, **Հայրապետյան Մ.**, Բերդածոր, Եր., «Ամարաս», 2011, 256 էջ, **Հարությունյան Հ.**, Շուշի: Քարտեզն անխոս վկաներ, Ստ., «Սոնա», 2013, 292 էջ, **Սկրտչյան Շ.**, **Ղավթյան Շ.**, Շուշի: Ողբերգական ճակատագրի քաղաքը, Եր., «Վասպիրենտ», 2008, 241 էջ, ունեցել է մի քանի հրատարակություններ, այդ թվում՝ ռուս. և անգլ.), **Բալայան Վ.**, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., «Ջանգալ-97», 2017, 592 էջ և այլն:
- 7 Տե՛ս **Վարապետյան Ս.**, Գետաշեն, Եր., Ա. հատ., 1992, 40 էջ, **Мелик-Шахназарян Л.**, Гандзак. Неутраченный мир. Ст.- Ер., «Амарас», 1996, 68 с., **Առաքելյան Մ.**, Շահումյան-Գետաշենի մաքառումների հազար օրը, Եր., Ա. հ., Գ. [Ա] (Միերի դուռ, 2005, 183 էջ), Գ. Բ. (Ան-Ջոն, 2007, 479 էջ), **Պետրոսյան Վ.**, Ներքին շեն. վավերագրված կարոտ, Մ., «Եղինայա կնիզա», 2008, 412 էջ,

**Երրորդ** խմբին կարելի է դասել ուղեգրական, ազգագրական, հանրագիտարանային, պատմաճարտարապետական հուշարձաններին նվիրված, պատերազմներում զոհված մարտիկների կենսագրական և այլ բնույթի աշխատությունները, որոնց կոնկրետացումը դուրս է մեր գրախոսության շրջանակից:

Խնդրո առարկա թեմայի վերաբերյալ նշանակալի գիտական գիտելիքներ են կուտակվել գիտական հոդվածների, վիճակագրական տեղեկատուների, փաստաթղթերի ու նյութերի, գիտաժողովների ժողովածուներում, տարբեր գրքերի առանձին գլուխներում և այլ աղբյուրներում, որոնց հիշատակումը մեծ տեղ կզբաղեցնեն և անհնարին է ներկայացնել մեկ հրապարակման շրջանակներում:

Մեր հավաստի տեղեկություններով՝ Արցախի բնակավայրերի մասին բազմաթիվ գրքեր դեռևս անտիպ են, որոնց հրատարակումը հրատապ է և կարող է արթուն պահել մեր կորուսյալ հայրենի եզերքի վերաբերյալ սերունդների պատմական հիշողությունը և համախմբել մեր հայրենակիցներին Արցախ վերադառնալու գաղափարի շուրջ:

Այս տեսանկյունից գնահատելով պրոֆեսոր Է. Մկրտչյանի նախաձեռնությունը՝ կարող ենք հավաստել, որ ընթերցողի սեղանին դրված գիրքը այժմեական է ու պահանջված:

## 1. Գրքի հեղինակի մասին

Գրախոսվող գրքի առանցքում հեղինակի հուշագրությունն ու գիտակցական կյանքի վերախմաստավորումն են, ուստի Է. Մկրտչյանի մասին հակիրճ տեղեկությունները հնարավորություն կընձեռեն պատկերացում կազմելու նրա շարժառիթավորման հանգամանքների մասին: Պրոֆեսոր Է. Մկրտչյանի ծննդավայրը 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարա-

---

**Еремянц-Гандзакеци С.**, Гандзак в 1905-1907 гг., 1917-1921 гг.: Документальная книга, Ер., Авт. изд., 2009, 104 էջ, **Еремянц-Гандзакеци С.**, Гандзак. «Армянские кладбища и церкви», Ер., Авт. изд., 2009, 156 էջ, **Еремянц-Гандзакеци С.**, Гандзак (1880-1916): Документальная книга, Ер., Авт. изд., 2010, 264 էջ, **Еремянц-Гандзакеци С.**, Гандзак и армянский революционный дашнакцутюн: Документальная книга, Ер., Авт. изд., 2011, 104 с., **Еремянц-Гандзакеци Сергей А.**, Гандзак в 1917-1920 гг.: Документальная книга, Ер., Авт. изд., 2013, 156 էջ և այլն:

8 Տե՛ս **Բաղդասարյան Ա.**, Հայրենի եզերք: Պատմական ակնարկ, Ստ., «Ազատ Արցախ», 2004, **Աբրահամյան Ե.**, Մեծ Թաղեր, Ստ., «Սոնա», 2009, **Ղազարյան Խ.**, Տումի: Պատմա-աշխարհագրական ակնարկներ, Եր., ՎՄՎ-Պրինտ, 2003, 212 էջ (1-ին հրատ.), Եր., «Արմավ», 2022, 200 էջ, (2-րդ հրատ.), **Աթայան Գ.**, Տող բերդաքաղաքի պատմություն, Եր., «Գասպրինտ», 2010, 312 էջ, **Ղուլյան (Ղուլունց) Ս.**, Բանաձոր, Եր., «Ձանգակ», 2013, **Абрамян Е.**, Мец Тагер, Ст., «Сона», 2010, **Гулян (Гулуни) С.**, Банадзор. Очаг. Ер., Изд: «Зангак», 2018, 373 էջ, և այլն:

գրից հետո **Հաղորթի շրջանի անտիկ մնացած միակ բնակավայրն էր**, որը ևս, հանձնվեց թշնամուն: Հայրենի տարածքները թշնամուն գիջելու անվերջանալի շարքը հանգեցրեց ամբողջ Արցախի կորստին՝ անհաղթահարելի ցավի ու տառապանքի դատապարտելով արցախցիներին և մեր բոլոր գիտակից հայրենակիցներին: Այդ ապրումները ծանրացել էին կյանքի 9-րդ տասնամյակը թևակոխած գիտնականի ու մանկավարժի սրտում: Սակայն կյանքի բովում թրծված մտավորականը չընկճվեց, ուժ գտավ իր մեջ՝ կայացնելու կարևոր մի վճիռ՝ թղթին հանձնելու տասնամյակների ընթացքում ամբարված գիտելիքները հայրենի գյուղի մասին՝ «Գրածը ջնջել չի լինի» համոզմամբ: «**Քանի ողջ եմ**,- իր գրքի նախաբանում գրել է պրոֆեսոր Է. Մկրտչյանը, -**ամեն ինչ, ամենքին, բոլորին հիշում եմ, ուրեմն անմահացնեմ Խժաբերդը և նրա բնակիչներին, որպեսզի թուրքը չկարողանա ժխտել, որ այն հայոց հող է անարատ, որ այնտեղ հայերն են ոտք դրել, կառուցել, շենացրել, բազմացել և ապրել փառք ու պատվով**»<sup>9</sup>:

Այս տողերից ակներև է դառնում պրոֆեսորի դրվատելի նպատակը, որի իրագործումը կարևոր ներդրում է մեզ պարտադրված կոզնիտիվ պատերազմում թշնամու նենգափոխումներին ու պատմահենությունը հակադարձելու գործում:

*Է. Ս. Մկրտչյանը ծնվել է 1930 թ. հունիսի 20-ին ԼՂԽՄ Հաղորթի շրջանի Խժաբերդ գյուղում: Ավարտել է Սյրեփանակերպի երկամյա ուսուցչական ինստիտուտի լեզվագրական բաժինը (1950 թ.), Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ ՀՊՄՀ) լեզվագրական ֆակուլտետը (1954 թ.), սպա՝ ասպիրանտուրան՝ գրաբարի մասնագիտացմամբ (1966 թ.): Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտական խորհրդում պաշտպանել է «Ենթակայի արտահայտությունը գրաբարում (5-րդ դար)» թեմայով թեկնածուական (1968 թ.), սպա՝ «Պարզ նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում» թեմայով դոկտորական (1999 թ.) արեւնախոսությունները:*

*1954-1963 թթ. աշխատել է Միսիանի շրջանի Դարբասի միջնակարգ և Լեռնաշենի ութամյա դպրոցներում հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1966-2022 թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում դա-*

9 Մկրտչյան Է., Խժաբերդը և կյանքիս շառավիղը (հուշագրություն), էջ 3:

**սախտու:** 2017-ից պրոֆեսոր-խորհրդարու է ՀՊՄՀ-ի ակադեմիկոս Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: 1965-2013 թթ. համալսելոյամբ հայերէնի մի շարք առարկաներից դասախոսոյթոյններ է կարդացել Կիրովականի հետակա մանկավարժական, Գորիսի պետական, Հր. Աճառյանի անվան, Մոնթեի անվան, Վարդենիսի, Սրեպիանակերտի «Գրիգոր Նարեկացի» և այլ մասնավոր բուհերում, ինչպէս նաև Սիյուքում (Սիրիայի Հալէպ, Գամասկոս, Քեսաբ քաղաքներում): Հեղինակ է մի շարք ձեռնարկների<sup>10</sup>, գրաբարից աշխարհաբար փոխադրումների<sup>11</sup> և շուրջ 60 գիտական հոդվածների: Խմբագրել է Արցախին վերաբերող գրքեր<sup>12</sup>:

Երկարամյա գիտամանկավարժական անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է «Արցախի պետական համալսարան-1969-1999» (Ստեփանակերտ, 1999 թ.), «Ազգային Կիւլպէնկեան 2002 թ.», «Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-90» (Երևան, 2012 թ.) հուշամեդալներով:

## 2. Հուշագրոյթան բովանդակոյթան, կառուցվածքի և այլ հարցերի մասին

Պրոֆեսոր Է. Մկրտչյանի հուշագրոյթոյնը հրատարակվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ: Այն հրատարակոյթան է պատրաստել Սյունիքի հայագիտական հետազոտոյթոյնների կենտրոնը: Գրքի խմբագիրն է բանասիրական գիտոյթոյնների թեկնածու, դոցենտ Մհեր Քումունցր:

Հուշագրոյթան հեղինակը ներկայացրել է հայրենի Խծաբերդ գյուղի պատմոյթոյնը, խոսվածքը, տոհմերը, տեղանվան ծագումը և այլ ուշագրավ տեղեկոյթոյններ: Այդ ամենը ներկայացված է պրոֆե-

<sup>10</sup> Մկրտչյան Է., Գրաբարի դասընթաց (ուսումնասոժանդակ ձեռնարկ), Եր., «Մանկավարժ», 2008, 300 էջ, Մկրտչյան Է., Խաչատրյան Լ., Հայոց լեզվի պատմոյթան դասընթաց: Գրային ժամանակաշրջան, Եր., «Ձանգակ» հրատ., 2016, 400 էջ:

<sup>11</sup> Աղուանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալեանց, Պատմոյթին համառոտ Աղուանից երկրի, Ստ., «Ղիգակ պլլուս», 2007, էջ 31-112, Առաքել Կոստանոյանց, Պատմոյթին Արցախի, աշխատասիրոյթամբ Է. Մկրտչյանի, Եր., «Արմավ», 2019, 232 էջ:

<sup>12</sup> Բաղդասարյան Հ., Հայերի էթնիկական մաքրում, բռնագաղթ և ցեղասպանոյթին Արրբեջանում 1988-1991 թվականներին, 2-րդ լր. և վերամշ. գիրք, Եր., «Բեկոր» հրատ., 2013, 380 էջ, Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը (Ստուգաբանոյթիններ), Եր., ԱՀ, 2018, 256 էջ:

սոր է. Մկրտչյանի կյանքի ու գործունեության հիշարժան դեպքերի ծիրում:

**Նախաբանում** հուշագրության հեղինակը պարզաբանում է գրքի լույս ընծայման շարժառիթները և անձնական ապրումները 2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի ագրեսիայի և նույն թվականի նոյեմբերի 9-ին անհասկանալի անձնատվությունից հետո Արցախի Հանրապետության մեծ մասի, այդ թվում Հադրութի շրջանի և հայրենի Խծաբերդ գյուղի բռնազավթման առնչությամբ:

Այնուհետև. հիմք ընդունելով Գտիչ վանքի վարդապետ Առաքել Կոստանդյանցի հաղորդած տեղեկությունները՝ պրոֆեսորը հանգամանալից քննում է Խծաբերդ անվան ծագումը և հանգում այն եզրակացությանը, որ Խծաբերդը գրչագրերում հիշատակված նույն Օծաբերդ (Օխծապէրթ) ավանն է (էջ 4, **այսուհետև փակագծերում նշվելու են միայն գրախոսվող գրքի էջերը – Մ. Հ.**):

Տեղանվան լեզվաբանական քննությունից հետո հեղինակը մի շարք պատմական ու տեղագրական տեղեկությունների հիման վրա ներկայացնում է նաև Խծաբերդի աշխարհագրական դիրքը և տարբեր պատմական ժամանակաշրջաններում բնակավայրի տարածքային ընդգրկումները:

**«Բնակչության կազմը և տոհմաբանությունը»** բաժնում ներկայացված են խծաբերդցիների ծագումնաբանությունը, տոհմերը (կամ ինչպես տեղացիներն են անվանում՝ **ազգերը**)՝ 1941 թ. տվյալներով (էջ 24): Հեղինակը ծանոթագրում է, որ «տվյալները գերազանցապես ներկայացնում են 90 տարեկանիս հուշերով» և «ինձ աջակցում է ընկերս՝ 92 տարեկան Լևոն Հովհաննիսյանը» և հայցում է ընթերցողի ներողամտությունը իրենց «հիշողություններում նկատելի թեթև պակաս տեղերի» համար (էջ 24, ծանոթ.՝ 9):

Կարծում ենք, որ հետագա ուսումնասիրողները Խծաբերդի բնակչության տոհմաբանությունը ավելի ամբողջական ու լիարժեք դարձնելու համար պիտի օգտագործեն ցարական Ռուսաստանի պաշտոնական ու վիճակագրական հրատարակությունների<sup>13</sup> և արխիվային վավերագրերի<sup>14</sup> արժեքավոր տեղեկությունները:

---

13 Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. Издан по распоряжению Главного начальствующаго гражданского частно на Кавказе Закавказским статистическим комитетом. Т., Тип. И. Мартиросянца, 1893, 966 с., **Осипов Г.**, Селение Даш-Алты Шушинского уезда, Елисаветпольской губернии, Сборник материалов для

«Խծաբերդի խոսվածքը» բաժնում մասնագիտորեն վերլուծված են բառապաշարի, բառակազմության և քերականական առանձնահատկությունները:

«Խծաբերդի դպրոցը» բաժնում ներկայացված են գյուղի լուսավորական կյանքի որոշ մանրամասներ, դպրոցի տնօրենները, շուրջ ութ տասնյակ հայտնի շրջանավարտները:

Առանձին բաժին նվիրված է **գյուղատնտեսությանը**, մասնավորապես՝ խորհրդային կոլեկտիվ տնտեսության գործունեությանը: Ընթերցողը պատկերացում է կազմում խծաբերդցիների քրտնաջան աշխատանքի, հանրային բարիք ստեղծելու և արարումի, կենցաղավարության մասին:

«Աշխատանքային դաստիարակություն» բաժինը սեփական օրինակով ներկայացնում է Էդուարդ Մկրտչյանի անձի ու աշխարհայացքի ձևավորման ընթացքը, ինչը կարող է ուսանելի լինել մատաղ սերնդի համար: Բազմաթիվ օրինակներով հեղինակը ցույց է տվել Ադրբեջանական ԽՍՀ խորական քաղաքականությունը ԼՂԻՄ-ի հայ բնիկ բնակչության նկատմամբ և տեղական իշխանության որոշ հայ ներկայացուցիչների համակերպվելու վարքագիծը: «Ադրբեջանի կառավարության և կենտկոմի կողմից ոչ մի օգնություն և օժանդակություն չէր ձեռնարկվում: – եզրահանգում է հուշագրողը,– Զարմանալի էր. դեպի ադրբեջանական գյուղեր ասֆալտապատ ճանապարհներ էին գցում...», իսկ դեպի մեզ...»՝ ոչ (էջ 65):

Դատելով տարիների հեռավորությունից՝ է. Մկրտչյանը արձանագրում է. «Խծաբերդի այդ ժամանակների (նաև՝ հետագայի) շեֆերը թույլ, անհամարձակ, շարքային մարդու նկատմամբ անհոգ (ընդգծումը՝ հուշագրողի), կասեի՝ վախկոտ էին (գուցե այդ ժամանակ ով էլ լիներ, պիտի վախենար. հա՞)» (էջ 65–66):

---

описания местностей и племен Кавказа, выпуск 25-й, отдел 2-й, Т., 1898, с. 101-136, «Кавказский календарь» (Тифлис: Гл. упр. Кавказ. наместника, 1845-1916), մասնավորապես՝ 1854, 1855 թթ.:

14 Центральный государственный исторический архив Санкт-Петербурга (ЦГИА РФ), ф. N 290, оп. N 11, д. N 2726, ՀԱԱ. ֆ. N93. ց. N 1. գ. №N 49, 50, 51 (Камеральное описание крестьян в управлении ханской фамилии Карабахской провинции. 1832-1833 гг.), ՀԱԱ, ֆ. N 56 (Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդ), ց. N 1, գ. N 305 (Ցուցակ հայոց ժողովրդականաց քաղաքի և գեղջ Ղարաբաղի վիճակի), գ. N 2596, գ. N 8064, ֆ. N 150 (Տեր-Դանիելյան Սիսակ Գաբրիելի), ց. N 1, գ. N 56, ՀԱԱ, ֆ. N 93, ց. N 1, գ. N 163 (Описание Карабахской провинции составленное в 1823 г. действительном статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым, 1866 г.) և այլն:



Հաջորդ՝ **հայ-ադրբեջանական հարաբերություններ**, բաժնում հեղինակն ավելի հանգամանալից է ներկայացնում միութենական հանրապետության խտրական, հայահալած քաղաքականությունը Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի և հատկապես ծայրամասային Հադրութի շրջանի բնիկ հայության նկատմամբ: Եվ տասնամյակներ անպատիժ կերպով շարունակվող այդ քաղաքականությունը արտահայտվում էր հարևանությամբ ապրող տեղացիների ամենօրյա փոխհարաբերություններում, կենցաղային հողի վրա, ինչի օրինակներին կարելի է ծանոթանալ ականատես-հեղինակի սույն հուշագրությունում:

Հատկանշենք, որ հայ-ադրբեջանական փոխհարաբերություններին նվիրված են հուշագրության բազմաթիվ էջեր (100-159): Այդ հարաբերությունների պատմությունը հասցնելով մինչև մեր օրերը՝ պրոֆեսոր Է. Մկրտչյանը եզրակացնում է. «2020 թ. վերջերին Արցախում տեղի ունեցածը նմանը չունի. այն իր ա) ողբերգականությամբ՝ արյան հեղեղով, բ) կենդանի ուժի և տարածքների ու բնակավայրերի կորուստների չափերով և գ) պետական կարգի դավադրության և դավաճանության բովանդակությամբ եզակի բացասական՝ սև էջ է գրառում հայոց պատմության մեջ. Նիկոլ Փաշինյանը գերազանցել է Վեստ Սարգսին (ընդգծումները՝ հուշագրողի)» (էջ 159):

**Բնակչության տեղաշարժեր** բաժնում ներկայացված են Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների՝ ինքնավար մարզի ժողովրդագրական կազմը փոխելու քաղաքականության հետևանքով Խժաբերդի բնակչության արտահոսքի և նախկին Խորհրդային Միության այլ բնակավայրեր արտագաղթի հանգամանքները:

Այնուհետև շարադրված են հեղինակի կյանքի հիշարժան իրադարձությունները՝ իրենց տոհմի ծագումնաբանության և պատմության համապատկերի մեջ: «**Մանկություն և պատանեկություն**» (228-241), «**ուսում և մասնագիտացում**» (242-254), «**սեր և ընտանիք**» (255-268), «**մասնագիտացում և գիտություն**» (269-278) բաժիններում սուկ նեղ-անձնական տեղեկություններ չեն, այլ նաև անդրադարձներ կան սովյալ ժամանակահատվածների հասարակական ու սոցիալական իրավիճակներին, դրանց սեփական ընկալումներին ու գնահատականներին, որոնք կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրողների համար:

Գրքի հավելվածի 58 էջերում ամփոփված են շուրջ 150 լուսանկարներ, որոնք հավաքել ու հրատարակելու համար տրամադրել է Արևիկ

Բեգլարյան-Գևորգյանը, որին հեղինակը հատուկ շնորհակալություն է հայտնում (էջ 281):

**Այսպիսով**, ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ Է. Մկրտչյանի արժեքավոր հուշագրությունը ընթերցասեր հանրության սեղանի գիրքը դառնալու հայտ է ներկայացրել: Ակնհայտ է գրքի օգտակարությունը ինչպես հայագիտության բնագավառի մասնագետների, այնպես էլ առհասարակ ընթերցողների լայն շրջանակի, Արցախի պատմությանը հետաքրքրվողների համար: Գրքի հրատարակումը արդիական է Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը վերականգնելու, հայրենի օջախներ արցախցիների վերադարձի իրավունքի միջազգային ճանաչման պատմաքաղաքական ու իրավական փաստարկները հանրահռչակելու տեսանկյունից:

**Մհեր Ա. Հարությունյան**  
*Պատմ. գիրք. թեկնածու*

**Մհեր Ա. Հարությունյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Արցախի ազգային-ազատագրական պայքարի, Արցախյան պատերազմի և ԼՂՀ Պաշտպանության բանակի, Արցախի պարբերական մամուլի, Արցախի Հանրապետության գիտակրթական ու մշակութային կյանքի պատմության ու պատմագրության հիմնահարցերը, Հայաստանի ռազմական պատմությանն ու ռազմարվեստին, մատենագիտությանը, տեղեկատվական պատերազմներին առնչվող և այլ թեմաները: Հեղինակ է 12, համահեղինակ 10 կոլեկտիվ մենագրությունների, 4 անհատական և կոլեկտիվ ձեռնարկների և ուսումնամեթոդական աշխատանքների ու ավելի քան 100 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ hamher@yandex.ru

## Summary

### **THE HISTORY OF THE HEROIC SETTLEMENT OF ARTSAKH**

Mkrtchyan E. S., *Khtsaberд and the Offspring of My Life (Memoirs)*, Yerevan, Real Print Publishing, 2023, 280 pp. + 58 pp., illustrations.

**Mher A. Harutyunyan**

*Ph.D. in History*

**Keywords** - Khtsaberд, Hadrut, Artsakh, Nagorno-Karabakh, memoirs, professor, settlement, etymology, research, genealogy, historical memory, resident, word formation, grammar, school, indigenous people, forced displacement.

In the context of the Azerbaijan-Turkey aggression from 2020 to 2023, which led to the occupation of the Nagorno-Karabakh Republic and the threat of genocide against the indigenous Armenian population with subsequent forced displacement, rethinking and popularizing the history of the once-existing "eastern regions" of Armenia has gained significant importance. This is due to the need to convey to international specialized and authorized organizations the demand for urgent measures to preserve the Armenian historical and cultural heritage, which is being destroyed, appropriated, and distorted in the occupied territories of historical Armenia, to maintain the historical memory of our compatriots and unite them around the idea of returning to their homeland, as well as to strengthen our counterarguments in the information war imposed on Armenia and the entire Armenian nation.

From this perspective, it is worth noting that the initiative of Doctor of Philological Sciences, Professor Eduard Samsonovich Mkrtchyan to present the history of his native village of Khctaberд in his memoirs can serve as a positive example for publishing books dedicated to other settlements of Artsakh.

Professor E. Mkrtchyan's memoirs were published by decision of the Scientific Council of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan. The book was prepared for publication by the Syunik Center for Armenian Studies. The editor of the book is Candidate of Philological Sciences, Associate Professor Mher Kumunts.

The author of the memoirs has presented the history of his native village of Khctaberд, its language, genealogies, the origins of toponyms, and other interesting information. All of this is presented in the context of significant events in the life and work of Professor E. Mkrtchyan.

In conclusion, it can be noted that E. Mkrtchyan's valuable publication aims to become a reference book for the reading audience. The usefulness of the book is evident both for specialists in Armenian studies and for the broader reading public interested in the history of Artsakh. The publication of the book is relevant in terms of restoring the territorial integrity of the Nagorno-Karabakh Republic, recognizing the international right to return to the homeland, and substantiating the historical, political, and legal aspects of its status.

Резюме

### ИСТОРИЯ ГЕРОИЧЕСКОГО ПОСЕЛЕНИЯ АРЦАХА

Мкртчян Э.С. «Хцаберд и отпрыск моей жизни» (мемуары), Ереван, изд-во «Реал Принт», 2023, 280 стр. + 58 стр., ил.

**Мгер А. Арутюнян**

*Канд. ист. наук*

**Ключевые слова:** Хцаберд, Гадрут, Арцах, Нагорный Карабах, мемуары, профессор, населённый пункт, этимология, исследование, родословная, историческая память, житель, словообразование, грамматика, школа, коренной народ, насильственное выселение.

В условиях азербайджано-турецкой агрессии 2020-2023 гг., приведшей к оккупации Нагорно-Карабахской Республики и угрозе геноцида коренного армянского населения с последующим насильственным изгнанием, важное значение приобрело переосмысление и популяризация истории когда-то существовавших Восточных областей Армении. Это связано с необходимостью донести до международных специализированных и уполномоченных организаций требований осуществить срочные меры по сохранению армянского историко-культурного наследия с целью поддержать историческую память наших соотечественников и объединить их вокруг идеи возвращения на родину.

С этой точки зрения, можно отметить, что инициатива доктора филологических наук, профессора Эдуарда Самсоновича Мкртчяна представить историю родного села Хцаберд в рамках его мемуаров может послужить положительным примером для издания книг, посвящённых и другим населённым пунктам Арцаха.

Мемуары профессора Э. Мкртчяна были изданы по решению Учёного совета Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна. Подготовка книги к печати была осуществлена Центром

армяноведческих исследований Сюника. Редактором книги является кандидат филологических наук, доцент Мгер Кумунц.

Автор мемуаров представил историю родного села Хцаберд, язык его жителей, их родословные, происхождение топонимов и другие интересные сведения. Всё это изложено в контексте значимых событий в жизни и деятельности профессора Э. Мкртчяна.

Труд Э. Мкртчяна претендует на то, чтобы стать настольной книгой для читающей аудитории. Очевидна полезность книги как для специалистов в области армяноведения, так и для широкой читательской аудитории, интересующейся историей Арцаха. Книга актуальна с точки зрения задачи восстановления территориальной целостности Нагорно-Карабахской Республики, признания права его граждан на возвращение на родину и обоснования историко-политических и правовых аспектов её статуса.

### Գրականություն

1. **Աբրահամյան Ե.**, Մեծ Թաղեր, խմբ.՝ Մ. Հովհաննիսյան, Ստ., «Սոնա», 2009, 365 էջ:
2. **Աբրահամյան Ժ.**, Դահրավ. Հայրենի հիշատակներ, Ասկ., «Օլիմպ», 2005, 60 էջ:
3. **Աբրահամյան Հ.**, Քերթ (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., Զանգակ-97, 2010, 176 էջ:
4. Արցախ: Երկասիրեց Մ. Եպս. Բարխուտարեանց, Բ., տպ. «Արօր», 1895, 460 էջ:
5. **Աթայան Գ.**, Տող բերդաբաղաբի պատմություն, Եր., «Գասպրինտ», 2010, 312 էջ [9] թ. նկ.[3] թ.քարտեզ.,
6. **Աղաջանյան Մ.**, Հաթերք. պատմությունը՝ հնադարից մինչև մեր օրերը, Ստ., «Դիզակ պլուս», 2012, 688 էջ:
7. **Աղաջանյան Մ.**, Բսօրրան Հաթերք [Հուշեր, մտորումներ], Ստ., «Դիզակ պլուս», 2016, 159 էջ, լուսանկ.:
8. **Աղասարյան Գ.**, Խնձրիստան գյուղի պատմությունը, Ստ., «Պոլիգրաֆ», 2002, 176 էջ:
9. **Աղայան Ա.**, Քոլատակ. Համառոտ պատմություններ գյուղի և նրա մարդկանց մասին, Ստ., «Դիզակ պլուս», 2014, 60 էջ:
